

Հայ գրականության օլիմպիադա-2017

Մարգային փուլ

## XII – դասարան . պատասխաններ

Մահարին հայ գրականության բացառիկ տաղանդներից է, որոնք գալիս են ապրեցնելու ու ուսուցանելու:

Նրա ապրած կյանքը ոչ միայն իր , այլև մի ամբողջ ժամանակահատվածի ողբերգություն է՝ շաղախված տրտմությամբ, զայրությամբ , սիրով, կամքով:

Մահարի կեղծանունը ծագել է «Լքում» բանաստեղծության մռայլ տրամադրությունից՝ մահ, արի՛: Երբ Լ. Եվանգուլյանը Դիտող ստորագրությամբ հոդված է տպագրում Մահարու բանաստեղծության մասին, որում նա պնդում էր, որ « թուրքահայ որբ գրականությունը որբ մահարիներով պիտի ծաղկի» , Մահարին գրում է. « Ես հաշվեցի , որ հնչեց իմ անմահության զանգը և պահեցի այդ կեղծանունը»:

Մահարին և՛ հոգու բանաստեղծ է՝ « մանկություն իմ, ոսկեծամ....», և՛ մտքի վերլուծաբան՝ « Երբ վանեցիները հեռանում էին Վանից, իրենց հետևից գունավոր քարեր էին ցանում , որպեսզի հետդարձի ճանապարհը գտնեին...» և՛ առօրյա գրուցակից ու խորհրդատու:

« Ծաղկած փշալարեր» վիպակը շոշափում է համաժողովրդական ողբերգությունից ծնված միլիոնավորների անձնական ողբերգությունը, փշալարերի ներսում փակված մարդկանց ապրելու ցանկությունը՝ « Օրհնյալ լինես դու, կյանք », սիրո վախվորած ծլարձակումն ու մեռնել-հառնելու անկոտրում կամքը:

Անհատի պաշտամունքի սոսկալի տարիների տարեգրությունն է ներկայացրել նաև ռուս մեծ գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Մոլժենիցինը իր « Գուլագ Արշիպելագ » բազմահատոր վեպում:

Երկու գրողների մոտ էլ խտացված է անգամ անմարդկային հալածանքների մեջ պահել մարդկային արժանիքները և արդարության հասնելու ուղիներ որոնել:

2.« Նահանջը առանց երգի » վեպը սփյուռքահայ տաղանդավոր գրողի՝ Ծահան Ծահնուրի վեպն է՝ ուղղված հայապահպանությանը. այն սթափության , զգաստացման , տազնապի շեփոր է հնչեցնում ճակատագրով դատապարտված այն հայերի համար, որոնք « հեղեղի բերանն ընկած տաշեղի նման» հայտնվել էին օտար ափերում:

Վեպի հերոսները՝ բացի Լոխում – Չարեհից, նահանջում են նախնյաց արմատներից, մոռանում են աղոթել մայրենի լեզվով, մոռանում են « հեռվում մնացած » հայ աղջկան , որը « անհրաժեշտ էր մեր արյունին» :

Մուրենը ցավով արձանագրում է « Ուրիշներու պես մենք ալ մեր կրոնքը ու հավատքը թողեցինք պատերազմի ընթացքին : Ու հիմա կհարվածվի մեզ վրա բռնող մեծագույն ու հիմնական սյունը՝ ընտանիքը »:

Ծահնուրի հերոսների նահանջի մեջ երգ չկա, իսկ երգը վերադարձ է , երգը հայրենիք է: Գեռևս 1930- ականներին Ծահնուրը հնչեցնում է տազնապի շեփորը. « Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սեր: Կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն, կը նահանջե լեզուն»:

Եվ մենք դեռ կը նահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին»: Այո՛, շարունակվում է այդ նահանջը ո՛չ միայն երկրից դուրս, այլև երկրի ներսում: Մենք նահանջում ենք մեր արմատներից, մենք զանց ենք առնում Քերթողահոր պատգամը՝ « Սահման քաջանց զենք յուրյանցն է»:

Մեր հասակակիցները չեն խոսում մեր հրաշք մայրենիով, որով հիացել և հիանում են անգամ օտարները:

Մենք մոռացել ենք Մեծն հանճարի՝ Չարենցի պատգամը. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», այս պատգամը ուղղված է ամենքին, բոլոր ժամանակների ամենքին:

Դժվար է հակադրվել Ճահնուրին, քանի որ ամեն օր դատարկվում է Հայաստանս, օտար, ամայի ճանապարհների խաչմերուկներում հոգեվարք է ապրում մաշտոցյան ոսկեղենիկը, բայց, ընդունելով և ընկալելով Ճահնուրի տագնապը, հիշում եմ Լևոն Ճանթին, Նիկոլ Աղբալյանին, բոլոր այն նվիրյալներին, որոնք օտար երկրներում դպրոցներ հիմնեցին, բարեգործությամբ զբաղվեցին՝ հավատալով Գանգրահեր տղային:

Հիմա էլ օտար երկրներում գործում են դպրոցներ, բայց դրանք հետզհետե վերածվում են Մեկօրյա, Կիրակնօրյա դպրոցների, և սիրտս սեղմվում է ցավից՝ տեսնելով այլ լեզուների հաղթարշավը իմ երկրում, իմ Հայաստանում:

3.«Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծությունը Չարյանի ճարտասանական գործերից է: Ակնհայտ է, որ Չարյանը երկու հանճարների կերպարներում կերտել է ժամանակի՝ իրարամերժ սկուզբունքներով ապրող գործիչներին:

Գյոթեն մարմնավորում է իշխանական քարոզչությանը ծառայող, պետական պարզևներից լիովի օգտվող արվեստագետներին, իսկ Բեթհովենը՝ հպարտ, ազնիվ, ազատ, արժանապատիվ արվեստագետի, ինչու չէ, նաև մարդու կերպարը:

-Ինչպե՛ս չամաչեցիր,- գոչեց ահեղ  
Հնչունների արքան՝ արդեն սառած,-  
Որ թեքեցիր գլուխդ հանճարեղ  
Այն թագակիր տխմար գլխի առաջ:

Չարյանի համակրանքը հպարտ, իքնքնավայել Բեթհովենի կողմն էանշուշտ: «Զրույց մեռած բանաստեղծի հետ» բանաստեղծության մեջ Չարյանը ներումն է հայցում Չարենցից, թեև ոչ մի տողում անունը չի հիշատակվում: Նա ուզում է իր մեղքերը քավել և ժամանակի մեջ հիշվել մաքուր խղճով: Նա տալիս է իրենց հարաբերությունների ընդհանրացված գնահատականը և դառնությամբ արձանագրում է՝

Եվ ինչ հոտառությամբ ամբոխային  
Գտան մի մարդ, մի աղմկոտ պոետ,  
Որի վրա մի կերպ կարկատեին  
Քո կորստյան պատճառը չարաղետ:  
Քո մահը իմ կորուստն է դառնակեզ:  
Ես ողբացել եմ քեզ հազար անգամ:  
Հազար ափսոս, որ դու կենդանի չես,  
Իմ ախոյան, վարպետ և բարեկամ:

4.Անբեկանելի ճշմարտություն է Համո Սահյանի պոեզիայի մարդախույզ, հոգեվերլուծական- զգացմունքային անկեղծությունը:

Հատկապես սիրային պոեզիան գրույց է ինքդ քեզ հետ, ինքնաժանաչում է ու տառապանք, որ ձուլվում է բնությանը՝ ծովին, ծաղկին, կաժանին, քարափներին: «Չես ասի ոչ մի բառով» բանաստեղծության մեջ բաժանման պահի տազնապն է տակնուվրա անում բանաստեղծի հոգին:

Այդ անասելի տազնապը անթարգմանելի է, իսկ ձևակերպումը՝ «Չես ասի ոչ մի բառով», հանճարեղ:

«Հարկադիր ծիծաղը» թաքցնում է դեպի սիրտ հոսող արցունքը, իսկ « թաքուն լացը» արդեն աղոթքն է մնաս բարովի:

5.Հրանտ Մաթևոսյանը հայ գրականության անմրցելի մեծերից է, ում ստեղծագործությունը եկավ շարունակելու ու հարստացնելու հայ արձակի բազմազան և մեծարժեք «աշխարհը աշխարհը դարձնող» մարդկանց բացահայտումը: «Աշնան արև» վիպակը ասք է արարող ու մաքառող մարդկանց մասին, և իզուր չէր, որ այն նախ լույս տեսավ «Երկրի ջիղը» վերնագրով:

Երկրի ջիղը տքնությամբ, սիրով, «երեխայի պես ուժով, ցավով» ընտանիք ու բարեկեցություն ստեղծող Աղունն է՝ վիպակի գլխավոր հերոսուհին, որի շուրջն էլ հյուսվում է վիպակի սյուժեն:

Խելացի, սրամիտ, խայթող, աշխատասեր, տոկուն Աղունին խորթ են ծուլությունն ու անգործությունը. Նրա խայթոցներն ուղղված են ընտանեկան ու հոգեկան անդորրությունը մաքուր կենցաղից ու բարեկեցությունից գերադասող մարդկանց: Որբության բաժակը մինչև մրուր ճաշակած Աղունը հարսնանում է հարկադրված. Ոչ ոք նրա կամքը չի հարցնում: Միմոնը, բնականաբար, նրա երագների ասպետը չէ. Ամեն գնով նա Միմոնին մղում է կամային քայլերի, բայց՝ ապարդյուն: «...Աշխարհը լիքը տղա՝ գնա, Աղունիկ, Միմոնից մարդ սարքիր...»: «Միմոն» անունը Աղունի բառապաշարում անճարակության ու անկարողության հոմանիշ է: Իր հավանած աղջկան հանդիպելիս Աղունը մտածում է. «Եսի՞մ ինչ սիմոնացվի բաժին է դառնալու»:

Նկատի ունենալով հանրության համար Միմոնի կատարած ապառիկ գործերը (Միմոնը անհարմար էր զգում իր պարտքերը ուզել) և բարոյական մի մեղանչում՝ Աղունը նրան երգիծանքով անվանում է «հանրային ամուսին»:

Միմոնն աշխատասեր է, բայց անկամ, գայթող քայլվածքով, քչախոս, իսկ Աղունը նրա հակապատկերն է. ճիշտ է, նա անընդհատ ծաղրում է Միմոնին, բայց հոգու խորքում մի թաքուն գուրգուրանք է պահում նրա համար:

«Միմոնից՝ մարդ, գոմից՝ տուն, Արմենակից Արմենակ սարքող», Աղունը չարացած չէ կյանքի ու մարդու հանդեպ. Նրա մեջ իրար են միահյուսվում տառապանքն ու ապրելու կամքը. Նա հպարտ է իր՝ որդուն բաժին հանած օժիտով և ուզում է, որ այն տեսնի սկեսուր Արուսը: Վերջինս, գնահատելով Աղունի անդադրում աշխատասիրությունը, տխրությամբ արձանագրում է, որ իր տղան նրանից սեր չի տեսել...

Հեռավոր Ծմակուտում ապրող մարդկանց միջավայրը, ապրելու կամքը, մարդկային հարաբերությունները Մաթևոսյանի գրչի տակ շնչավորվում են, դուրս են գալիս գրականության լայն պողոտա: Ծմակուտն, իհարկե, պայմանական անուն է. այդ ազնիվ, հրաշալի մարդիկ ապրում են մեր կողքին: Ծրջասույթը՝ Ծմակուտի քուրմ: